Գրաւցիք, Շիտանցիք, Մամխոուանցիք, Խալիլանցիք, Մահմոանցիք, Մէհմէտ փիրանցիք, Հարքըցիք, Դաևանցիք, Ժիրկցիք, Զիպարցիք, Եզտինանցիք ևայլն։

Պիթլիսի Մանզկերտ ու Պուլանըգ *գաւառները. ստորաբաժանումներէն Հասանանցիք, Ներքին-Պուլանըգը՝ Ճիպրանցիք։*
Վանի եւ Պիթլիսի սահմանները. *Բօշար (Թափարիկ) ցեղերը.*

Պիթլիսի շրջանները. *Ալկանցիք, Սլօկանցիք, Կլճցիք, Մօտկանցիք, Խութցիք, Էթմէքցիք։*

Մուշի լեռները. *Պօհտանցիք, Խութեցիք, Պալաքցիք (մասը հայախօս), Միրանցիք ևայլն։*

Պիթլիսի, Մուշի, Կարնոյ այս սահմաններու մէջ եղածները գլխաւորաբար կը պատկանին ազգային Զիլ, Միլ գլխաւոր բաժանմունքներուն, և իրենք կը լինին անոնց ստորաբաժանումները (*)։

(*) *«Զիլ, Միլ» ազգայնութեան բաժանմունքի վրայ բաւական կարելի կը լինի լոյս սփռել, երբ նկատի ունենանք նաև Վանի Շըկակները, որոնց հայական ծագման մասին խօսուեցաւ առաջ՝ թէ ըստ պատմութեան և թէ ըստ աւանդութեան։*

Հայաստանի քիւրդ ցեղերու վրայ ընդարձակ ծանօթութիւն մը ունենալու համար՝ աւելորդ չենք համարիր տալ նաև Կարնի մէջ հրատարակուած «Յառաջ» թերթի N. 11 *ի մէջ երևցած ցեղերու մասին տեղեկութիւնները, «Ժամանակակից Քիւրդերը» վերնագրով։*

Խոյթեցիք, Զըխուրցիք. *Այս երկու ցեղերը կը բնակին Մշոյ նահանգին պատկանող Զխուր և Խոյթ գաւառներու մէջ, իրենց գլխաւորն է Մշոյ հանրածանօթ Մուսա պէյը։*

Շատխանցիներ.— *Այս ցեղը խաղաղ աշխատաւոր ժողովուրդ է և կը զբաղի երկրագործութեամբ. իբր Րայա ժողովուրդ շատ ճնշում կը կրէ ուրիշ աշայիր ցեղերէ։ Կը բնակի Խնուսի հարաւային Շատեան կոչուած մասը և Պինկէօլի ստորոտը։*

Տաղ-էթէք *կոչուած մասերը. Այս ցեղը տարածուած է նաև Տէրսիմի և Դերջանի կողմերը։*

Մամըքանցի, Սայտանցի *ցեղերը կը բնակին Մշոյ դաշտի մէջ և Քօսուր լեռները, այս ցեղերը Հասանանցիներուն վրայ կը հաշուըուին։*

Զըպրանցիք.— *Այս ցեղը շատ բաժանումներ ունի, ինչպէս Մախսուտենք, Խըթօենք. Տարպօենք, Ֆէզլիներ ևայլն ևայլն. որոնք* Մալասուէր *ալ կըսուին (Ճիաւորի տանից)։ Համխոիէ են և բաւական մեծ ուժ կը*